

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
9-րդ դասարան
 2019-2020 ուսումնական տարի
 Առաջին, երրորդ ուսումնական շրջան

Ուսումնական պլան

Բովանդակություն	Շաբաթական ժամաքանակը
Ընդհանուր բաղկացուցիչ	
Հայոց լեզու	3
Գրականություն	2
Երկրորդ օտար լեզու	3
Ռուսերեն	2
Մաթեմատիկա	5
Քիմիա	1
Ֆիզիկա	1
Կենսաբանություն	1
Աշխարհագրություն	1
Պատմություն	2
Հասարակագիտություն	1
Արվեստ	2
Տեխնոլոգիա	2
Ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործ.	3
Ընդհանուր պարապմունք	
Ռեզումարզական ճամբար	5 օր (տարեկան)
Սովորողի ընտրած գործունեություն	4
Ընդամենը	33
Լրացուցիչ կրթություն	
Տնային ուսումնական աշխատանք	
Լրացուցիչ ուսուցման դասընթաց (ներ)	

Ուսումնական պլանի պարզաբանումներ

- Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
- Սովորողը կրթական ծրագիրը յուրացնում է կրթահամալիրի ավագ դպրոցում (այսուհետ՝ Դպրոց), որը կրթական Բլեյան բաց ցանցի հանգույց է:
- 9-րդ դասարան ընդունվում է սովորողը, որ իր ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ ընտրում է Ծրագիրը, [սահմանված կարգով](#) պայմանագիր կնքում ուսումնառության մասին: Ընդունելությունը կատարվում է «[Մուտք կրթահամալիր](#)» ուսումնական ճամբարով:
- Ուսումնական տարին կազմված է չորս շրջանից: Երկրորդ և չորրորդ շրջանները կազմակերպվում են որպես ուսումնական-ստուգատեսային ճամբարներ: Յուրաքանչյուր շրջանում Սովորողի համար [սահմանված կարգով](#) կազմվում է անհատական ուսումնական պլան՝ հիմք ունենալով սույն ուսումնական պլանը և ուսումնական շրջանի առանձնահատկությունը:
- Ընդհանուր բաղկացուցիչով ուսումնական պարապմունքը կազմակերպվում է 20-25 հոգիանոց խմբով: Սովորողի ընտրությամբ դասընթացի պարապմունքը կազմակերպվում է 8-15 հոգիանոց խմբով: Սովորողի նախասիրության զարգացման ակումբի անդամների նվազագույն քանակը 12 է: Կրթահամալիրի տնօրենի որոշմամբ կարող են գործել ավելի փոքրաքանակ խմբեր՝ կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին:
- Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
- Ուսուցումը կազմակերպվում է Դպրոցի ուսումնական օրացույցով:
- Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս սահմանված տեխնիկական [պայմաններին](#) բավարարող անհատական ներթուփ-նոթուփով կամ պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:

9. [Մեղիագրադարանը](#), դպրոցական գրադարանը, դասավանդողների, սովորողների, ուսումնական կենտրոնների բլոգները, ամսագրերը սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
10. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական [պարապմունքների](#) տարբեր տեսակներով և ձևերով:
11. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան կրթական ծրագիրն իրականացվում է առկա, հեռավար ձևերով:
12. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին, նախագծերին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում: Դասավանդողի գործունեության արդյունքները նույնպես [սահմանված կարգով](#) էլեկտրոնային գրանցում են ստանում:
13. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են [սահմանված կարգով](#):
14. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության, ակումբային պարապմունքներ, հայրենագիտական, [ուսումնական ճամփորդություններ](#), իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
15. Ուսումնական օրը սկսվում է 15 րոպե տևողությամբ [ընդհանուր պարապմունքով](#):
16. Սովորողն ունի ուսումնական բլոգ, որում սահմանված կարգով արտացոլվում է նրա ուսումնական գործունեությունը: Անձնական ուսումնական բլոգի (կայքի) սահմանված կարգով վարումը [սովորողի](#) և [դասավանդողի](#) պարտադիր ուսումնական աշխատանք է:
17. Կրթահամալիրի, Դպրոցի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի ուսումնական աշխատանք են:
18. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին և արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:
19. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, նախագծերի բաղկացուցիչն են:
20. Սովորողի ընտրությամբ և լրացուցիչ կրթության դասընթացները, ակումբները կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, լաբորատորիաներում, արվեստանոցներում, արհեստանոցներում:
21. «Հայոց լեզուն», «Գրականությունը» ներառում են արևմտահայերենի, գրաբարի ուսուցում:
22. «Մաթեմատիկան» կազմված է «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Մաթեմատիկա՝ առանց բանաձևերի» դասընթացներից:
23. «Կենսաբանություն» առարկան «Մարդու կազմախոսություն և մարմնի խնամք» դասընթացն է, որը ներառում է էկոլոգիայի բաղկացուցիչ և ուսուցանվում փորձի հիման վրա:
24. «Բնական գիտություններ» բնագավառի դասընթացների ուսուցումը կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա, բնագիտական ու բնապահպանական աշխատանքների, էկոլոգիական, աշխարհագրական, երկրագիտական, կենսաբանական, աստղագիտական ուսումնական նախագծերով: Ֆիզիկայի, քիմիայի ուսումնական պարապմունքի ժամանակ դասարանը բաժանվում է երկու խմբի:
25. Ուսուցանվող մի օտար լեզուն ռուսերենն է: Երկրորդ օտար լեզուն սովորողը ընտրում է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, վրացերեն, պարսկերեն, թուրքերեն ցանկից: Օտար լեզուները գործնական կիրառություն ունեն մյուս ուսումնական պարապմունքներին:
26. «Տեխնոլոգիա» առարկան կազմված է «Տնային տնտեսվարություն», «Միջավայրի խնամք և բարեկարգում», «Պարտեզի խնամք», «Դիզայն», «Առողջագիտություն, առաջին բուժօգնություն», «Մեղիատեխնոլոգիաներ», «Դիզայն-խեցեգործություն», «Բույսերի խնամք», «Կենդանիների խնամք» դասընթացներից, կազմակերպվում է ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների, սպասարկման (հերթապահության) ուսումնական նախագծերի ձևով: Ուսումնական պարապմունքի ժամանակ դասարանը բաժանվում է երկու խմբի:
27. «Արվեստ» առարկան կազմակերպվում է երաժշտության, պարի ուսուցման, արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ ուսումնական նախագծերի, ծեսի, տոնի, համերգի, ցուցադրության կազմակերպման ուսումնական նախագծերի միջոցով:
28. «Պատմություն», «Արվեստ» դասընթացների մեջ, «Ընթերցում ենք գրաբար» ուսումնական նախագծերում ներառված են նաև «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի համապատասխան բաղադրիչները:
29. «Ֆիզիկական կրթություն, ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներառում է սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքները, մրցումները, ռազմա-մարզական խաղերը, սահմանված կարգով ռազմա-մարզական դաշտային ճամբարի կամ հավաքի մասնակցությունը: Սովորողին առաջարկվող մարզական ակումբներն են հնգամարտ, նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ, սեղանի թենիս, հրաձգություն: Որպես լրացուցիչ կրթության մարզական ակումբ՝ սովորողը կարող է ընտրել լող, սեղանի թենիս, հեծանվավարություն, եռամարտ, ձիավարություն, մարզական այլ ակումբի պարապմունքներ: Կրթահամալիրում կամ կրթահամալիրից դուրս որևէ մարզաձևի լրացուցիչ կրթության ծրագրում ընդգրկված սովորողը կարող է կրթահամալիրում մարզական-ակումբային պարապմունքների չմասնակցել: Անվտանգ գործունեության հմտություններ սովորողը գործնական եղանակով ձեռք է բերում բազմամարտի նախագծերի, քայլարշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ: Սովորողը տարվա ընթացքում 5 օր մասնակցում է ռազմամարզական ճամբարի:
30. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է առարկայական նախագծեր՝ քերականության, մաթեմատիկական, բնագիտական (ֆիզիկոսի, քիմիկոսի, կենսաբանի, աստղագետի), ինժեներական-տեխնիկական, կինո-ֆոտոյի, մեդիալրագրության, օտար լեզվի (գերմաներեն, վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, հունարեն, իսպաներեն)-թարգմանչության, կենդանիների և բույսերի խնամքի, վայրի բույսերի հավաքման-մշակման, պարտիզայանի, կերպարվեստի-դիզայնի-մոդելավորման-քանդակի, ոսկերչի, պատմաբան-հնագետ-ազգագրագետի, երգչախմբային, մարզական, արհեստավորի (այդ թվում՝ նաև բրուտի, պարտիզայանի, այգեգործի, խոհարարության, կարուձևի)

գործունեություն: Սովորողը կարող է ընտրել նաև կրթահամալիրի [պատանեկան ակումբներից](#) մեկը, ձևավորել նոր ակումբ:

31. Սովորողի [տնային աշխատանքը](#) բաղկացած է նրա ընտրած (անհատական ուսումնական պլանով) դասընթացների առաջադրանքներից, ամենամսյա առարկայական ֆլեշմոբներից, ուսումնական նախագծի աշխատանքից:
32. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծի բաղկացուցիչն են:
33. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս, սահմանված կարգով:
34. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և [սահմանված կարգով](#) ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում: արդյունքները հանրայնացվում են հանրակրթական ստուգատեսների, ուսումնական օրացույցով որոշված տոների մասնակցության նախագծերով, ցուցադրություններով, համերգներով, ներկայացումներով:
35. Սովորողի ուսումնական ամբողջ աշխատանքն արտացոլվում է նրա ուսումնական բլոգում:
Կիրառվում են [գնահատման տարրեր ձևեր](#), որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Ըստ ուսումնական շրջանների սովորողի ուսումնական գործունեության՝ սահմանված կարգով կատարվող գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած, իր ուսումնական բլոգում հրապարակած աշխատանքները (այդ թվում՝ հետազոտական-ստեղծագործական-թարգմանական աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծերի, ուսումնական ճամփորդությունների, հայրենագիտական արշավների նյութեր, առաջադրանքների կատարում, լրացուցիչ կրթության նյութեր, ուսումնական նախագծերի, ուսումնական շրջանների հաշվետվություններ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցության նյութեր): Խրախուսվում են սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
36. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները [սահմանված կարգով](#) ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, համերգներում, ստեղծագործական հավաքներում: